# ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ՃԵՄԱՐԱՆ

## ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ

## ԵՒ

## ՄԵԾ. ՄԱՀՏԵՍԻ ԵՍԱՅԻ ԻԶՄԻՐԵԱՆՑ

---

Գրեթէ ամենայն կողմանց մեր ազգայիններէն թէ բանաւոր և թէ գրաւոր գանգատներ կըլսուէին, թէ «մեր Եկեղեցականք ըստ մեծի մասին տգէտ են և ժամանակիս ոգւոյն համեմատ չեն հովուեր իւրեանց հօտերը», ևն. ևն: Եւ արդարև կարի իրաւացի են այսոքիկ: Ըստ որում երկրագնտին շատ կողմեր և շատ ազգեր արուեստից և գիտութեանց հետևող հանդիսած ժամանակ, մեր ազգայինք ի բազում տեղիս բարոյական և մտաւորական ի խոր խաւարի և ի քուն թանձր կը խորթան, և չունին զարթուցիչք և ի լոյս գիտութեանց առաջնորդողք, և մանաւանդ այսպիսի լուսաւորեալ դարուս մէջ մեր եկեղեցականաց մեծագոյն մասը ուսեալ չլինելով, ժողովրդեան թշուառութեանց օգնել և մխիթարել զնոսա ոչ կարեն, և որ առաւել ցաւալին է՝ գուցէ փոխանակ օգտից՝ վնասներ անգամ պատճառեն մեր Ս. Եկեղեցւոյ և Ազգութեան:

Սոյն այս ճշմարտութիւն արդէն խորանկատ ուշադրութեան առած լինելով Վեհ. Կաթողիկոս, յորէ անտի ամբարձման ի Գահ Հայրապետութեան ամենայն Հայոց՝ անդադար և անհամբեր ոգւով զցայգ և զցերեկ կը տքնի և միակ հնար և անմիջական դարման գտած է գիտութեանց և ուսմանց ընդհանրանալը ի մերազնեայս մանաւանդ յեկեղեցականս, և որովհետև մեր Եկեղեցւոյ առաջին աստիճանի Հովիւք և պաշտօնեայք կուսակրօններն են՝ և որք բազմատեսակ յարմարութիւնք ունին ազգին աղէտից օգնելոյ, նոցա համար յոյժ պատշաճ և անհրաժեշտ դատեց Մայր Աթոռոյս մէջ մի Ճեմարան հիմնել, որոյ շինութիւնը յառաջակայ տարւոյս մէջ յաջողութեամբ Տեառն բոլորովին կատարի:

Այս Ճեմարանս կառուցանելով՝ իւր բուն նպատակին հասանելոյ և իրական օգուտներ ի ձեռս բերելոյ համար անշուշտ կը պահանջէ երևելի՝ փորձեալ և բազմահմուտ դասատուներ հրաւիրել, և արժանաւոր ռոճիկներ տալով՝ ճեմարանը յանձնել նոցա ուսումնական և բարոյական խնամոց, որպէս զի ամենայն Հայաբնակ վիճակներէն և քաղաքներէն ըստ որոշեալ կանոնացն ընտրանօք բերեալ աշակերտք՝ կարևոր ուսմամբք և գիտութեամբք և Եկեղեց. և Ազգային դաստիարակութեամբք զարգացած՝ ի ժամանակին Ազգի և Եկեղեցւոյ կարօտութեանց համապատասխան անձնանուէր՝ հմուտ՝ բարեկիրթ և ազգասէր Եկեղեցականներ ունենամք, որք իւրեանց հմտութեամբ և բարոյական առաքինութեամբք ճոխացեալ կարողանան ըստ արժանւոյն հովուել Հայազն ժողովուրդը, զերծուցանելով մեր Եկեղեցւոյ բանաւոր դառանց հօտը ի յափշտակութեանց և ի ծուղակաց գայլոց, և այսպէս ցրուեալ ու վտարանդի ժողովուրդը բարոյապէս և մտաւորապէս լուսաւորուած միանգամայն յաջողի վերակենդանութիւն ստանալ:

Իսկ այս ամէնը դրամական մեծագումար պիտոյից կարօտիլը աներկբայելի է. սակայն ցաւ է յաւելուլ՝ զի Մայր Աթոռոյս ունեցած կարողութիւնք և դրամա-

կան միջոցք տակաւին Վ. անուցս տնտեսական կառավարութեան ըստ արժանւոյն չբաւականանալով՝ դժուարութեան մէջ է եկեղեցեաց հաշուեկշիռը հաւասարեցնելոյ, ուստի՞ ապա ձեռնհաս պիտի լինի յաջողել նորակառոյց ճեմարանիս նիւթական կառավարութեան ամէն պէտքերը հոգալոյ՝ չունենալով մի առանձին ծոխ աղբիւր արդեանց:

Վասն որոյ Նորին Ս. Օծութիւն Վեհ. Կաթողիկոս թէպէտ կարի մեծ մտատանջութեանց ենթարկեալ կը յուզի, բայց ոչ երբէք կը վհատի՝ գիտնալով մերազնեայ ուսումնասէր և բարեպաշտ անձանց հոգեկան եռանդն և ազգասիրութիւնը, և առայժմ դիւրին և յուսալից միջոց կը գտանէ մերազնեայ ձեռնհաս ազգասիրաց նուիրաբերութիւնքը, որպէս զի իւրաքանչիւր Ազգայինք՝ ըստ ինքնայօժար ցանկութեանց՝ մի կամ աւելի որդեգիրներ ընդունելով՝ նուիրեն նոցա տարեկան ծախքը ի յիշատակ կենդանեաց և ննջեցելոց և վասն պահպանութեան և յարատեւութեան Ազգի և Եկեղեցւոյ, որով նորակառոյց ճեմարանիս մէջ ընդունուելի և կրթուելի առ առաւելն 60 ժառանգաւոր աշակերտաց տարեկան ծախքը դէթ մեծ մասամբ մատակարարուելով նուիրաբերութեամբք և նպաստիւք երևելի և հոգեսէր հարուստ մերազնէից, միացեալը հայթայթել կարելի լինի:

Արդ ըստ աներկբայ յուսոյ Վեհ. Հայրապետի՝ ըղձամք և մեք յանկերժիւս լինել, զի որք միանգամ կը բաղձան խանդակաթ սիրով հաստատութեան մեր Առաքելական Ս. Եկեղեցւոյ, և Նորին պայծառութեան, և մեր Թշուառ և սիրելի Ազգը լուսաւոր և բարգաւաճ յառաջադիմութեամբք վերականգնել, այսպիսի մի բազմաշահ օգուտ ընծայող ձեռնարկութեան նպաստել պիտի փութան իւրաքանչիւր ազգայինք ըստ կարեաց և ըստ ինքնայօժար չափու անձկութեանց՝ ձեռնհասք առանձինն առանձինն՝ և այլք ընկերութեամբք որդեգիրներ ընդունելով և բարերարք հանդիսանալով ժառանգաւոր աշակերտաց ճեմարանիս, որպէս զի օր և ժամ յառաջ ճեմարանը բացուի, և այսպիսի վսեմ և հանրօգուտ ձեռնարկութեան և նպատակի իրականացումն և արդիւնքներ արտափայլեն յիւրում ժամանակին:

Ահաւասիկ այսպիսի գովելի բաղձանօք և նպատակօք արդէն մի քանի բարերարք ունեցաւ նորակառոյց ճեմարանս, ինչպէս և Գզլարեցի Ա. կարգի վաճառական Մեծապատիւ և Ազգասէր Մահտեսի Եսայի Աստուածատրեանց Իզմիրեանց յայսմ երրորդ նուագիս փութալով յուխտ և յերկրպագութիւն Միածնաէջ Տաճարի Մայր Աթոռոյս՝ ներկայ ամսոյս մէջ՝ և տեսնելով նորակառոյց ճեմարանը և ազգիս և Եկեղեցւոյս ապագային համար ոգևորեալ՝ ինքնին յանձն առաւ մի որդեգիր ընդունել յանմահ ի յիշատակ հանգուցեալ եղբօր իւրոյ սիրելւոյ Գալուստի Ա. Իզմիրեանց. ուստի և յատուկ գրութեամբն և անձամբ առ Սրբազնագոյն Հայրապետս մեր յայտնեց իւր իղձը, զոր պէտք է կատարել ի բացման ճեմարանի՝ տարեկան 300ական ռբլ. նուիրելով յերկուս նուագս՝ ի տարեգլխոյ և զկնի վեց ամսոց, ուստի և օրհնութեան և շնորհակալեաց Կոնդակ ընդունեց ի Վեհ. Կաթողիկոսէ:

Այս առթիւս և մեք կը գրուատենք յիշեալ Ազգասէր անձը, և միանգամայն քաղցր պարտք կզգամք հրապարակաւ պարզել մեր խորին գոհունակութեանց և երախտագիտութեանց հաւաստիքը առ Նորին Ազգասէր Մեծապատուութիւն հանդերձ յարգանօք:

ՆՈՒԷՐ

Նոր — Նախիջևանցի Մեծապատիւ Յովհաննէս Մարկոսեան Փափազեանց երկու հարիւր րուբլի նուիրեց ի նպաստ վերանորոգութեան Կաթողիկէ Տաճարի Մայր Աթոռոյս՝ առաքելով զայն յանուն Ս. Կաթողիկոսի:

Յիշեալ բարեպաշտ անձի սոյնպիսի նըւիրմանց համար մեր շնորհակալութիւնքը հրապարակաւ կը նուիրեմք Նորին Մեծապատուութեան:

ԱՐԿԵԱԶՈՒ Ս ԽԱՉ ՎԱՆՔ.

Երևանցի Մեծ. Պ. Պօղոս Խաչատրեան ոսկեզօծ մի խաչ նուիրեց Արկեազու Ս. Խաչ Վանուց կաթուղիկէին վերայ կանգնեցնելոյ համար:

Յիշեալ ջերմեռանդ անձի նուէրը կգովեմք և շնորհակալութեամբ կհրատարակեմք ի գիտութիւն մերազնէից:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ ԲԻՒԶԱՆԴԵԱՆ:

ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ

Անգղիոյ հիւպատոսարանին կողմանէ հրատարակուած ծանուցում մի կը տեսնուի ատենէ մ'ի վեր քաղաքիս եւրոպական լրագրաց մէջ, որով Հօճա Ղազար Գրիգորեանի ժառանգորդք կը հրաւիրուին որ իրենց ժառանգորդ ըլլալն ապացուցանող վկայութիւն երով ներկայանան՝ իրենց իրաւունքը հաստատելու համար:

Յիշեալ ծանուցմէն կը հասկցուի թէ Հօճա Ղազար Գրիգորեան անուն Հայ մը մեռած և ժառանգութիւն թողած է, և թէ անոր ժառանգն եղող անձինք կան Մայրաքաղաքիս մէջ:

Ասանկ ծանուցում մը միայն Ֆրանսերէն լրագրով հրատարակուելուն մէջ մասնաւոր դիտում մը ըլլալու է. որովհետև Հայու մը ժառանգներն հարկաւ Հայ կըլլան:

Ահաւասիկ ծանուցման թարգմանութիւնը:

Ժառանգութիւն Հօճա Ղազար Գրիգորեանի

ԱԶԴ ԱՌ ԴԱՏԱԽԱԶՍ.

Վերոյիշեալ ժառանգութեան նկատմամբ մասնակցութեան իրաւունք ունեցողաց կը ծանուցուի՝ որ մերձակայ Նոյեմբեր 10էն սկսեալ՝ ամեն ուրբաթ ցերեկուան ժամը 1ին (կէս օրէն մէկ ժամ առաջ) նիստ տեղի պիտի ունենայ Անգղիոյ Հիւպատոսարանը. ուր Սըր Ֆիլիպ Ֆրանչիս նկատողութեան պիտի առնու յիշեալ ժառանգութեան մասնակից եղողաց վկայութիւնները և ապացոյցները:

Օրագիր Թիւ 585:

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

Ներկայ Ամսագրոյս աւարտեց Արարատ ութնամեայ Դ. շրջանը, և յառաջակայ 1872 տարւոյս Յունվարէն պիտի ըսկսանի Ե. շրջանը՝ իւրաքանչիւր ամիս հրնգական թերթով և պատկերազարդ հրատարակուելով:

Տարեկան բաժանորդագինն պիտի լինի միենոյն ՉՈՐՍ ռուբլի հանդերձ ծախուքըն ճանապարհի: